ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/52

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Բողոք բերող՝ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օդորակիչների) վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 15.04.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. դադարեցնել 09.04.2020թ.-ի «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ կայացված՝ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2. պարտավորեցնել «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնաբերված անհամապատասխանությունների մասով շտկում պահանջել «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ից:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.04.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/52 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.05.2020թ.-ին:

2. <u>«Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ն 15.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի ապրիլի 9-ին կայացել է ՀՀ պետական եկամուտների կարիքների համար հայտարարվել է շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օղորակիչների) վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի հայտերի բացման նիստը:

Հայտ է ներկայացրել է երկու ընկերություն, մեր ընկերությունը <<Էյչ Վի Էյ Սի Սերվիս>> ՍՊԸ-ն և Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն, ըստ 09.04.2020թ.-ի ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցման գնահատման հանձնաժողովի N 2 արձանագրության 2-րդ կետի.

1. մեր ընկերությունը հավելված 1-ում չի լրացրել գործունեության հասցեն,

2. հայտի ապահովումը ներկայացված է ոչ լիարժեք բացակայում է շահառուի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև վճարողի ստորագրությունը և կնիքը,

3. Մասնակցի անվանումը սխալ է լրացված հավելված 1-ում և 2-ում (Գնային առաջարկ) և հետևաբար մասնակցի անվանումը չի նույնականացվում մասնակցի ՀՎՀՀ-ի հետ:

Վերոհիշյալ հիմքերով մեր հայտը գնահատվել է անբավարար, իսկ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի հայտը գնահատել է բավարար, ուզում եմ հայտնել, որ մեր գնառաջարկը ցածր է քան Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի գնառաջարկը, բայց քանի-որ մեր հայտը անբավարար են գնահատել, ուստի 10.04.2020թ.-ին տեղեկագրում gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով մինչև հինգ օրացույցային օր, որը լրանում է 15.04.2020թ.-ին:

Ուսումնասիրելով փաստաթղթերը պարզ է, որ այո մեր կողմից չի լրացվել հավելված 1-ով նախատեսված գործունեության հասցե տողը, բայց այս բացը համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների կազմակերպման>> կարգը հաստատելու մասին որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի այն է.

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

և նույն որոշման 41-րդ կետի, այն է.

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ենթակա է շտկման, ինչ վերաբերվում է հայտի ապահովման մեջ մատնանշված թերություններին, ապա հայտնում եմ, որ այն համապատասխանում է հրավերի պահանջներին, արձանագրության մեջ գրված է, որ բացակայում է շահառուի անվանումը, հարկ վճարողի համարը և վճարողի ստորագրությունը և կնիքը, այն դեպքում երբ համաձայն ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 7-րդ կետի եթե հայտի ապահովվումը ներկայացրվում է կանխիք փողի ձևով, ապա.

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Ինչը մեր կողմից կատարվել է, որում առկա է ընկերության ՀՎՀՀ-ն, շահառուի անվանումը ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան, գումարի չափը, որը համարժեք է գնային առաջարկի հինգ տոկոսին, նպատակ դաշտում նշված է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հայտի ապահովում, իսկ ինչ վերաբերվում է վճարողի ստորագրությանը և կնիքին, ապա հայտնում եմ, որ փոխանցումը կատարվել է էլեկտրոնային եղանակով և վճարման հանձնարարագիրը կնիքով հաստատվել է բանկի կողմից, այսինքն սա համարվում է բնօրինակ փաստաթուղթ, որի վրա մասնակցի կնիքը և ստորագրությունը պարտադիր չէ և եթե նույնիսկ դա այդպես լինի, ապա վերը թվարկված ենթադրյալ խախտումները ևս ենթակա են շտկման, սակայն վստահաբար կարող եմ ասել, որ այս պարագայում նույնիսկ շտկման կարիք չկա, որովհետև մենք ուսումնասիրել ենք հայտի ապահովում պահանջող բազմաթիվ Ընթացակարգներ, որտեղ նույն ձևով ներկայացրված ապահովումները համարվել են բավարար, ցանկության դեպքում Armeps համակարգից կարելի է տեսնել նման Ընթացակարգները, և վերջապես 3-րդ անհամապատասխանությունը, որը իփր թե հիմք է հանդիսացել մեր հայտը մերժելու համար, դա այն է, որ ընկերության անվանումը սխալ է լրացված Հավելված 1-ում և 2-ում և հետևաբար Մասնակցի անվանումը չի նույնականացվում մասնակցի ՀՎՀՀ-ի հետ, ապա այս կապակցությամբ հայտնում եմ, որ ենթադրյալ սխալը այն է, որ «էյչ Վի էյ Սի Սերվիս»

ՍՊԸ անվան էյ պարբերության մեջ շշաձև է-ի փոխարեն գրվել է ե տառը, այս պարագայում խոսել որ մասնակցի անվանումը չի նույնականացվում ՀՎՀՀ-ի հետ սխալ է, քանի, որ նախ նույնականացումը էլեկտրոնային Ընթացակարգի պարագայում արդեն իսկ համակարգ մուտք գործելով կատարվում է մուտքանուն և գախտնաբառ ներմուծելով, իսկ այս տիպի վրիպումը ենթակա է շտկման համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների կազմակերպման>> կարգը հաստատելու մասին որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի և նույն որոշման 41-րդ կետի, և համաձայն նույն որոշման 42-րդ կետի այն է.

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հետևաբար մեր հայտը կարող էր մերժվել միայն շտկում ուզելուց և մեր կողմից շտկում չկատարելուց հետո միայն համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների կազմակերուզման>> կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետի:

Վերոհիշյալ որոշումներով գործադիրը նախատեսել է նմանատիպ վրիպումների հնարավորությունը, այդ իսկ պատճառով նախատեսել է շտկում պահանջելու պարտավորությունը պատվիրատուի համար:

1. ՀՀ պետական եկամուտների կարիքների համար շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օդորակիչների) վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցմանը Armeps համակարգով ներկայացրված «էյչ Վի էյ Սի Սերվիս» ՍՊԸ հայտը ամբողջությամբ:

2. ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցման գնահատման հանձնաժողովի N 2 արձանագրության:

3. ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն

4. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների կազմակերպման>> կարգը հաստատելու մասին որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի,

հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,

բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

5. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 41-րդ կետի

Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

6. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետի

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32- րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

7. Համաձայն գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի.

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընպայնու մ և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

8. ՀՀ գնումների մասին օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի.

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

9. Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի.

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

10. Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի.

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝

1. դադարեցնել 09.04.2020թ.-ի «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ կայացված՝ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2. պարտավորեցնել «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնաբերված անհամապատասխանությունների մասով շտկում պահանջել «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ից:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 16.04.2020թ.-ին թիվ գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 15.04.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 17.05.2020թ.-ին ներկայացրած թիվ 1/18-2/22301-2020 գրությամբ, ներկայացնելով «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում հայտ են ներկայացրել 2 կազմակերպություն՝ Անուշ Պետրոսյան ԱՁ-ն և «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ն (հայտերը կցված են):

ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքում հայտնաբերվել է, որ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Մասնակցի անվանումը սխալ է լրացված և հետևաբար Մասնակցի անվանումը չի նույնականացվում մասնակցի ՀՎՀՀ-ի հետ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ նույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը՝ հանձնաժողովը «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությամբ նշված մյուս թերությունները շտկման ենթակա են և արձանագրվել են որպես ի գիտություն:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օդորակիչների) վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 01.04.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ն և «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն:

«Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից՝

- թիվ 1 հավելվածով ներկայացրած՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ չի նշվել Ընկերության գործունեության հասցեն,

- հայտի ապահովման մեջ սխալ է լրացվել շահառուի անվանումը, չի լրացվել շահառուի հարկ վճարողի հաշվառման համարը, փաստաթուղթը չի ստորագրվել և կնքվել,

- ինչպես նաև թիվ 1 և թիվ 2 հավելվածներում սխալ է լրացվել Ընկերության անվանումը, ինչը չի նույնականացվում վերջինիս ՀՎՀՀ-ի հետ (04230785), մասնավորապես՝ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի փոխարեն նշվել է «Էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ թիվ 1 հավելվածում գործունեության հասցեն լրացված չէ, հայտի ապահովումը ներկայացված է ոչ լիարժեք, բացակայում է շահառուի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև վճարողի ստորագրությունը և կնիքը: Ընկերության անվանումը սխալ է լրացվել թիվ 1 հավելվածում և թիվ 2 հավելվածում /գնային առաջարկ/, ինչի արդյունքում Ընկերության անվանումը չի նույնականացվում վերջինիս ՀՎՀՀ-ի հետ:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 15.04.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օդորակիչների) վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 01.04.2020թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից՝

- թիվ 1 հավելվածով ներկայացրած՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ չի նշվել Ընկերության գործունեության հասցեն,

- հայտի ապահովման մեջ սխալ է լրացվել շահառուի անվանումը, չի լրացվել շահառուի հարկ վճարողի հաշվառման համարը, փաստաթուղթը չի ստորագրվել և կնքվել,

- ինչպես նաև թիվ 1 և թիվ 2 հավելվածներում սխալ է լրացվել Ընկերության անվանումը, ինչը չի նույնականացվում վերջինիս ՀՎՀՀ-ի հետ (04230785),

մասնավորապես՝ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի փոխարեն նշվել է «Էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ:

Հանձնաժողովի 09.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ թիվ 1 հավելվածում գործունեության հասցեն լրացված չէ, հայտի ապահովումը ներկայացված է ոչ լիարժեք, բացակայում է շահառուի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև վճարողի ստորագրությունը և կնիքը: Ընկերության անվանումը սխալ է լրացվել թիվ 1 հավելվածում և թիվ 2 հավելվածում /գնային առաջարկ/, ինչի արդյունքում Ընկերության անվանումը չի նույնականացվում վերջինիս ՀՎՀՀ-ի հետ:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում, Ընկերությունը որպես իրավաբանական անձի անվանում նշել է՝ «Էյչ Վի **Եյ** Սի Սերվիս» ՍՊԸ՝ «Էյչ Վի **Էյ** Սի Սերվիս» ՍՊԸ-ի փոխարեն, միաժամանակ թիվ 1 հավելվածով նշելով նաև Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը:

https://petekamutner.am/ և https://www.e-register.am/ կայքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 04230785 թվերով հարկ վճարողի հաշվառման համարի ներքո գրանցված է միայն մեկ կազմակերպություն՝ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ն:

ՀՀ հարկային օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հարկային մարմնում հաշվառվող հարկ վճարողին տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ), որը հանդիսանում է նրա նույնականացման կոդը: ՀՎՀՀ-ն միակն է և ենթակա չէ փոփոխման: ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության լույսի ներքո, վերջինիս սույն գործի փաստերի հետ համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության անվանման «Է» տառի փոխարեն նշված «Ե» տառը հանդիսանում է ուղղագրական սխալ, վրիպակ /բառի մեջ սխալ գրված տառ/, ինչպես նաև հիմք ընդունելով «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ նշված Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի և «Էյչ Վի Եյ Սի

Սերվիս» ՍՊԸ-ի նույն իրավաբանական անձն է, քանի որ, ինչպես վերը նշվեց, հարկ վճարողի հաշվառման համարը հանդիսանում է ընկերության նույնականացման կոդը, այն միակն է և ենթակա չէ փոփոխման, ինչպես նաև ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Բացի այդ, Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, քանի որ թիվ 1 հավելվածում, ինչպես նաև հայտի ապահովման մեջ անհամապատասխանություններ արձանագրելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ կիրառելով Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը չպետք է գնային առաջարկի մասով մերժեր Մասնակցի հայտը, իսկ 09.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրված մնացած անհամապատասխանությունների մասով պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել դրանք՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 15.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/52 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. պարտավորեցնել «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 09.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանչելու մասին որոշումը,

- ընդունել «Էյչ Վի Էյ ՍԻ Սերվիս» ՍՊԸ-ի հայտով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ